ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 197 – Ա **27 սեպտեմբերի 2017 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՍԻՐԱԿԱՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության 2017 թվականի սեպտեմբերի 6-ի ՆՍՄ/5429-17 գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի պահանջները չկատարելու համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյանին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:
2. Նշանակված տուգանքը մուծել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 900005243119 հաշվի համարին, մուծման կտրոնը ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի հողօգտագործման և հողաշինարարության բաժին՝ 15-օրվա ժամկետում:
3. Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ Ն. Ղազարյանին՝ Ռոբերտ Սիրականյանի կողմից նշված ժամկետում տույժը չվճարելու դեպքում գանձումն իրականացնել դատական կարգով:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ